

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՅ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Կոնդակ յանուն Հոգ. Կառավարութեան Ալէքսանդրապօլու, որով կարգեցաւ Տ. Սիմէօն Քաջանայն խորանապահ Ս. Աստուածածին եկեղեցւոյ: Թ. 217:

Կոնդակ յանուն Գործակալի և Երիցփոխանաց երկուց եկեղեցեաց Բագուայ որով հրամայեցաւ տալ ի գումարաց եկեղեցեաց երիս հազար բուբլիս արկածելոց Շամախուոյ: Թ. 223:

— Յանուն Գործակալին Քութայիսայ Տ. Դաւիթ ա. Քաջանայի Եարալեան, որով հրամայեցաւ թոյլատրել Տ. Խաչատուր Քաջանայի առնել քաջանայադործութիւն որոյ կարգն վերադարձուցաւ ի Վեհ. Հայրապետէն: Թ. 253:

— Յանուն վիճակ. Կոնսիստ. Վրաստանի և Իմէրէթի, որով յայտնեցաւ զկարգմանէ Կարապետի Տ. Գէորգեան յանտառապահ վանուցն Հաղարծնոյ: Թ. 263:

— Յանուն Գեր. Տ. Փոխանորդին Գանձակայ Անանիա եպիսկոպոսի, որով պատուիրեցաւ յաւելուլ մի հարիւր բուբլի ի վերայ ռոճկի Երուանդ Քաջանայի Տ. Միքայէլեան: Թ. 301:

— Յանուն Տեսչի Տպարանի Մ. Աթուոյ, որով կարգեցան անգամք Տպարանական ժողովոյ Գէորգ Սարկաւազն և ուրարակիր Իսահակն: Թ. 304:

— Յանուն Վիճ. Կոնսիստ. Վրաստանի և Իմէրէթի, որով հրամայեցաւ թողուլ ի տիրապետութիւն Ա. Նանասեանցի զանկեալն յինքենէ այգին ի վերայ եկեղեցապատկան հողոյ, համաձայն վճռոյ և հաճութեան ծխականաց եկեղեցւոյն: Թ. 318:

— Յանուն Վիճ. Ատենին Շամախուոյ որով հրամայեցաւ տալ ի գումարէ եկեղեցւոյն Մատրասայ գեղջ, ուսուցիչ Մկրտչի Աթաբէգեան և յիսուն բուբլի ստորին ծառայողի զպրոցի տեղւոյն. Թ. 330:

— Յանուն Հոգ. Կառավարութեան հին Նախիջևանի,

որով վաւերական համարեցաւ պատկն Զաքարիայ Աստուածա-
ծատրեան ընդ նունիայ Գէորգեան Խաչիկ գիւղացւոյ: Թ. 336:

— Յանունն Հոգ. Կառավարութեան Ախպլխայի, որով
յայտնեցաւ զառաքմանէ, Տ. Մատթէոս Վարդապետի քարո-
զիչ քաղաքին յընթացս Մեծի պահոց: Թ. 346:

— Յանունն Վիճակային Կոնսիստորիայի Վրաստանի և
Իմերէթի որով թոյլատրեցաւ թաղել յեկեղեցւոջ Խօջիվանից
զիշխանուհի Մագթաղինէ Բէհբուլթեան: Թ. 356:



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՅՈՒ ԺԽԵԿԱՆ ԿԸՆՈՆԵԳՐՈՒԹԻՒՆ

Տաճի բոյլ սպագրել իբր ծրագիր
վասն նկատողութեան:

Մկրտիչ Կարադիկուս Ամենայն Հայոց

Հայաստանեայց Եկեղեցու ծխական համայնքները կառավար-
ուել են և կառավարուում են մինչև օրս համաձայն այն կարգերի
և կանոնների, որ որքազործուած լինելով դարաւոր սովորոյթով՝
այժմս էլ ընդունուած և դործող են հանդիսանում ծխական ժո-
ղովրդի եկեղեցական կենցաղավարութեան և դործունէութեան հա-
մար: Սովորոյթով հաստատուած այդ կարգ և կանոնը տակաւին մի
ամփոփ և լիակատար արձանագրման չէ ենթարկուած: Զանազան
ժամանակներում եկեղեցական այլ և այլ խնդիրների վերաբերեալ
լոյս տեսած առանձին կանոնադրութիւններ և օրէնսդրութիւններ
շատ կողմերից շօշափել են ծխական համայնքի կազմակերպութիւնը,
յիշատակել նրա դործունէութեան սկզբունքները, սակայն ծխա-
կան համայնքին յատկապէս նուիրուած չլինելով, ի հաւելէ այդ
կողմնակի կանոնադրութիւնները և օրէնսդրութիւնները չէին կա-
րող անթերի և ամբողջացած մի արձանագրութիւն լինել տիրող
ծխական կանոնական կարգերի: Մինչդեռ մի ամփոփ և ըստ կա-
րելւոյն լիակատար ծխական կանոնադրութեան կարեւր գնալով
աւելի և աւելի զգալի էր դառնում և բազմիցս արտայայտուած